

ՀԱՅԱՍՏԱՆ

Հ Ա Յ

ՅԵՂԱՓՈԽ ԵՎ ՍԵՆ ԵՐԵՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ .

Ոչինչ չը կայ այնչափ ցաւալի, որչափ այն, երբ յեղափոխական գործունէութեան ամենատար ժամանակը, — մի գործունէութիւն, որ ընդամենը երեք-չորս տարիից ի վեր է սկսված, բայց արդէն տպացուցել է իր մեծ անհրաժեշտութիւնը և իր ձգտումները ու սկզբունքների ամբողջ ընդարձակութիւնն ու բարձրութիւնը, — ոչինչ չը կայ, ասում ենք, այնչափ ցաւալի, երբ այդպիսի ժամանակ յայտնվում են հասարակութեան կրթված, ինտելիգէնտ գասի մէջ անսկզբունք, նեղասիրտ ու նեղամիտ տարրեր։ Ոչինչ չը կայ այնչափ ցաւալի, երբ այդպիսի սուղ, բայց փառաւոր բազէին հասարակութեան ինտելիգէնտ գասի մէջ երեւան են գալիս այնպիսի տարրեր, որոնց ձգտումները չունեն ոչինչ թարմութիւն ու ժամանակակից առաջադիմութեան համապատասխան բնաւորութիւն, որոնց գաղափարները կաղմում են տարօրինակ հոսանքներ ների խառնուրդ, որոնց աշխարհահայեցքը համ է տալիս նացիօնալիստական, ազգամարտական թթու փըրթոյով և բուրում . . . նախապաշարումների հոսած աղբով։ Սակայն որքան այդ երեւոյթը ցաւալի լինի, նոյնքան յեղափոխական բազէներում նա մի բնական երեւոյթ է, ինչպէս բնական է այն, որ ճահիճը վրդոված ժամանակը՝ գորտերը կռկռալով անսպասուած գուրս կը ցատկեն սփռւ։ Բայց նոյնքան նաև բնական պահանջ է լինում այգուհետե այդ երեւոյթի վերացումը, որովհետև ասի ինչ ասորժիլի երաժշտութիւն կարելի է համարել գորտերի կռկոցը։ Բայց բանը վերոյիշած անսկզբունք, նեղասիրտ ու նեղամիտ տարրերի այն ազդեցութեան մէջն է, որ կարող են նրանք ունենալ հասարակութեան ու գործի ընթացքի վրայ։

Հասարակական երկունքի ժամանակ հասարակական գիտակ վիրաբոյժների անհրաժեշտութիւն է ըզգացվում, այնպիսի վիրաբոյժների, որոնք զերծ լինեն ամեն աւանդական նախապաշարումներից և հետևող

գիտական մեթոդին, որոնք ճնշված չը լինեն հասարակութեան բուռնական, հնացած սովորութիւնների կապանքների և հասկացողութիւնների նեղ կողակտի մէջ։ Բայց փայ երկունքի ճգնաժամը կրող հասարակութեան, եթէ նրա վիրաբոյժներն իրենց գործունէութեան մէջ չեն առաջնորդվում այն ամենով, ինչ հասարակական աջող վիրաբուժութեան անհրաժեշտ պայմանն է, այսինքն այն ամենով, ինչ կաղմում է իր ժամանակի ամենաթարմ, ամենատաաջաղէմ ու ամենատողջ ձգտումները։ Մօր արգանդից յայտնվում է ն ուրածինը — այդ ազադայ սերունդը, երկունքի ժամանակն էլ հասարակութիւնը ենթարկվում է վիրաբուժական միջոցների՝ նորը, թարմը, ապագան իր արգանդից ծնունդ տալու համար։ Վա՛յ, ասում ենք, հասարակութեանը, եթէ նրա երկունքի միջոցին տատմէրներ (դասիկ) գան նստեն նրա զլխին։ Կը տհա՜հէնց այդպիսի տատմէրների զեր են կատարում յեղափոխական գործունէութեան մէջ վերոյիշած նեղասիրտ, նեղամիտ, անսկզբունք տարրերը։

Այս բոլորը մենք ասացինք, աչքի առջև ունենալով հայ երիտասարդութիւնը, որի մէջ սկսել են երեւան գալ այդպիսի տատմէրներ, որոնք, բնականաբար, իրենց գործունէութեան չըմանում կարող են ու նենալ իրենց ազդեցութիւնը։

Գեռ որանից հագիւ մի տարի առաջ, մինչդեռ հայկական մտքերը թմրութեան ու ծանր մտածման տակ ճնշված, չը գիտէին ինչպէս անել, ինչ անել, յանկարծ, ընդհանուր խլութեան մէջ, միմեանց հետեւից պայթեցան հայկական յեղափոխական երկու անդրանիկ շարժումներն, իրենց հետեւից առաջացնելով յեղափոխական կարմիր տէնօրի փաստերը։ Գրանք ու բոտի խիստ զարկեր էին բնութեան մեռելութեան ծածկին։ Ամբողջ հայութիւնը միանգամից ցնցվեցաւ և նրա առջև անասելի արագութեամբ բացվեցաւ մի մեծ պատմական գործ։ Այդ գործի ասպարէզի թանձր փորագոյրն այլ ևս պատուում և ընկած էր։ Հայութիւնն իմացաւ թէ ինչպէս անել և ինչ անել։ Կը շատ ցաւալի է, կրկնում ենք, որ այսօր, այդպիսի խորհրդաւոր բազէում հայ ինտելիգէնտ, կրթված երի-

տասարդութեան յեղափոխութեան մէջ ունենալիք պարտականութիւնն ու դերը ոմանց աչքին անորոշ, իսկ ոմանց աչքին խիստ սահմանափակ է մնացել:

Հայկական յեղափոխութիւնը չէ կայանում միայն նրա մէջ, որ տպագրութեան միջոցով հային տաճկից քաղաքականապէս զտուեալ Հայկական յեղափոխութեան ժամն առաջացել է քաղաքակրթված աշխարհի այնպիսի մի պատմական րօպէում, երբ այդ յեղափոխութիւնն արդէն էապէս իր մէջ պէտք է ամփոփէ ժամանակիս համամարդկային ամենաառաջնական ու ամենաազատ ձգտումները: Առաջնորդվելով ժամանակիս այդ ձգտումներով և միմիայն այդ ձգտումներով, հայ յեղափոխական երիտասարդութիւնն այդ եղանակով պէտք է կազմէ իր սկզբունքներն ու նպատակները յեղափոխութեան մէջ: Նա այդ եղանակով էլ պէտք է գծագրէ, բնականաբար, և իր գործունէութեան նախագիծը: Այդ նախագիծը կարող է «գործնական» չը համարվել այնմարդկանց տեսակէտից, որոնք ամեն բանի վրայ նայում են նացիօնալիստական, նեղ ազգայնական ակնոյնների միջից, մարդիկ, որ վարակված են այդ նեղամիտ հայեացքներով ու նեղասիրտ զգացումներով. այդ մարդերի բառարանում «գործնական» բառն այլ տարբեր ու նեղ նշանակութիւն ունի:

Բայց այդ նախագիծը կատարելապէս գործնական ու զրական է յայտնվում, երբ դիտում ու քննում ես նրան համամարդկային ներկայ պահանջների ու ձգտումների տեսակէտից, հայութեան ո՛չ թէ լոկ ազգայնական նեղ տեսակէտից, այլ նրա մարդկային զարգացման ու առաջադիմութեան տեսակէտից: Նացիօնալիստական, բուռնական, հին, սուանդական, կրօնական, հասարակական բազմաթիւ նախապաշարումներից պէտք է կատարելապէս զերծ լինի հայ յեղափոխական երիտասարդութիւնը, որ կարող լինի հաւատարիմ ու ճշմարիտ կերպով ծառայել հայկական յեղափոխական գործին, որի նշանակութիւնն ու խնամքը չէ կայանում միայն թիւրք բռնականալուծի լոկ ազգայնապէս զատվելու մէջ: Նա կա, յանում է նրանում, որ ազգային անկախութեան հետ միասին երկրում պէտք է հաստատվեն, կառուցվեն այն պիտի հասարակական պայմաններ, որոնք տան ժողովրդին ընդարձակ քաղաքական ու տնտեսական իրաւունքներ, միանգամայն նրան ղենելով ազատ առաջադիմութեան շաւղի վրայ: Միմիայն ազգային ինքնորոշութիւն ձեռք բերելն ու զատվելը տաճկից չէ կարող կազմել հայ յեղափոխական զարգացած երիտասարդութեան ձգտումն ու նպատակը, որ միանգամայն հակառակ է թէ՛ համամարդկային ներկայ ձգտումներին և թէ՛ անգոհացուցիչ հայ ժողովրդի քաղաքական, հասարակա-

կան ու տնտեսական պահանջների տեսակէտից: Իսկ նացիօնալիստական ձգտումները լոկ այդ կէտին կարող են հանգել: Մի և նոյն ժամանակ հայկական յեղափոխութիւնը պատերազմ չէ միմիայն արաքին բռնականալուծեան գէտ, այլ նա պատերազմ է նաև հայկական ներքին հնացած ու փտած կարգերի գէտ, նրա բազմաթիւ բուռնական, փտած սովորութիւնների գէտ, նրա հասկացողութիւնների, ամբողջ աշխարհահայեացքի գէտ: Իսկ այդ ներքին հնաւանդ կարգերը, բուռնական սովորութիւնները, հասկացողութիւններն ու աշխարհահայեացքը լոկ այն ժամանակ կը կործանվեն, երբ ժողովրդի մէջ նոր ու զարգացած սովորութիւններ, հասկացողութիւններ ու աշխարհահայեացք կազմելու համար պահանջված կը լինեն հասարակական կացութեան նպատակադրման պայմաններ: Իսկ նացիօնալիստական ձգտումներն արդէն կը լինեն այդպիսի հասարակական պայմաններ ձեռք բերելու նպատակին: Պէտք է լաւ ըմբռնել այն միտքը, թէ հասարակական յայտնի պայմանների, կերպերի հիմքը տնտեսական արդիւնաբերութեան յայտնի կերպերը լինելով հասարակական կերպերն իրենց կողմից ծնունդ են տալիս մարդկանց աշխարհահայեացքին ու հասկացողութիւններին: Մարդիկ այն են, ինչ որ նրանցից շինում է հասարակական պայմանը:

Ո՛չ թէ տատկէր, ո՛չ թէ նացիօնալիստ նեղասիրտ ու նեղամիտ ձգտումներ ունեցող և զրանց համեմատ գործող պէտք է լինի հայ յեղափոխական երիտասարդութիւնը, այլ կանգնած ժամանակիս զարգացման իսկական պատուանդանի վրայ, նա պէտք է հասարակական լուրջ վիրաբոյժ հանդիսանայ:

Նացիօնալիստական ձգտումների տէր մարդիկ կարող են նոյնքան զիւրութեամբ ընկճվել հիասթափվել, յուսահատվել ժամանակաւոր անաջողութիւնից, որքան և բօպէական բորբոքման ու գրգռման ենթակայ լինել: Այդօրինակ գործունէութիւնը չէ կարող ունենալ ոչ մի որոշ նախագիծ, ո՛չ մի որոշ նպատակ, ո՛չ մի որոշ ուղղութիւն: Նա կը լինի խաղալիկ նոյն իսկ իր սեփական սխալների: Յարատեւ, տոկուն ու անյաղթ կարող են մնալ միայն նրանք, որոնց ձգտումները միախառնված են համամարդկային ձգտումների հետ, հիմնված համամարդկային կատարեալ բարօրութեան, ազատութեան ու ճշմարտութեան պաշտօնարար վրայ:

Հայութեան պէտք է իրրեւ վիրաբոյժ մէկ այնպիսի յեղափոխական երիտասարդութիւն, որ ունենայ լուսաւոր, ազատ ու ճշմարիտ առաջադէմ ձգտում ու միտք, որ լինի ուղղամիտ, ինքնավստահ, հպարտ ու անկրնճելի բնաւորութեան տէր և իր ոգևորութեամբ

Հանդերձ՝ գիտակ իր պարտականութեան ամբողջ ծանրութեանը և իր պատմական գերի մեծութեանը՝ Նրա վրայ ընկնելիք պատասխանատվութիւնը չառ ծանր է թո՛ղ նա լաւ կըէ իր ամեն մի ձգտումը, իր ամեն մի անելիքը. — հայ ժողովուրդը յեղափոխութիւն անելով չէ ուզում աւերակների վրայ թագաւորել, այլ ուզում է իր երակներում կենդանարար արիւն և իր մէջ կենսատու հիւթ զգալ ու աճել։ Վաղը պատմութիւնը հայ յեղափոխական երիտասարդութեան կը տայ հարց, թէ՛ «ի՞նչ արեցիր» հաղարարորների կեանքը վտանգի ենթարկելով, հաղարարորների արիւնը թափել տալով»։ Եւ պատմութեան առջև նա պէտք է կարողանայ բաց ճակատով պատասխանել. — «հաղարարորների արիւնը թափելուն նպատակը միլիոնատերերին բարեկեց դարձնելու համար»։

Նրա այդ պատասխանը չը պիտի լինի փուճ ֆրազա, այլ իրականութիւն։

ԳԱՆԳԱՏՆԵՐ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՑ

Ներքև զետեղում ենք Մշից ստացած մի հետաքրքիր գրութիւն, անխօսիս պահելով նրա լեզուն ու ոճը իր պարզ գեղեցկութեամբ։

«Էնք որ Հայաստանի շատ գաւառներ չուռ են եկած թող վկայեն որ զուլմիւր (բռնութիւն) սաստկութիւն մեր երկրի մէջ ուրիշ ամէն տեղուանքից աւելի շատ ու շատ է։ Ուղղորդ, Վանայ և Արգրումայ վիլայաթներում մէջ հուբմաթ շատ հայեր կը բանտարկէ ազգի ապով, բայց քրդերու վայրենութիւնը և աւազակութիւններ էն տեղուանք էնքան շատ չեն. մեր Պիթլիզու վիլայաթ ճըւմարիտ գծովը է. թէ՛ անիրաւ կառավարութիւն զմզի կը չարչարէ և թէ՛ վայրենի քրդեր զըմէն անպատմելի չարութիւն և պատիժ կը հասցուն մեր զլխուն։ Մեր Մշու դաշտ քանի հըմալ երթայ կը քամալըի աւերակ կը դառնայ, լացող բուլբուր բնակարան կեղնի. այն մեր Մեղրա գետի անուշ հասիաթ ջրերը կարծես շուտու լեզի են կտրեր։ Քանի սէր միութիւն մզի չկայ, քանի իրարու ձեռք չենք բռնէ և մէկ մէկի չենք օգնէ, մզի խակի չարա չկայ. միճակ աղբերութենով յուս սէր եղնելով կրնանք զմեզի ազատենք էս միճակից, մեր քուլֆաթով ու ազգով մեր մալով ու մուլքով հանգիստ ապրենք։ Խնկիզուց, Ֆրանք սըզից մզի ումէտ չկայ, Մօսքօֆ լէ քան զթուրք տահա վատ է։

ձերմակ արտունք շատ թափեցանք, քիչիկ մ'լէ կար միւր արուն թափենք, էն վախըթ տեսէք թէ ի՞մալ կեղնի... Մեր տէրտէրներ ու եպիսկոպոսներ զմզի ազօթելու կը խրատեն, խորանք լէ հիմիկ զուրանց զլուխ չեն կարնա

ազատի թուրքի ու քրդու զուլմից։ Ահա գեւա անցեալներ մեր գեղի Պաէի երէց Տ. Մանուէլ լեւոնէրն է փախեր Տաօղէնց Մակարի, Գօջօի Մհրօի և Տ. Սարգսի Աօյի հետ. խորանց ֆլըթելուն պատճառ հըմալ կասեն։

Կառավարութիւն Մշու մէջ կրտսներու մատնիչութեւնով չէրքէղի հաշտներով հայ մը կը բանտարկէ. վրէն շատ թղթեր ու իմզաներ կը գտնան, էտ ապով զնորըն. Յէն և զընկերտանք կը փնտոնեն, խորանք լէ կը փախնին լեւոնէր։

Երբ որ թէ էտ անիծեալ մատնիչներ չեղնէր, մեր վիճակ էսքան աւեր չէր եղնի։ Էտա ձմրան սկիզբ էտոնց մատնիչութենով հուբմաթ դաշտի գեղեր ճանտարմէ զըր. կելով հայ գեղացու գէնքեր ժողվին տարան. թուֆանկ, խանչար, նաչար, պըշխա՛ զըմէն տարան. էնդին քրդեր սիլահէորած ազատ չուռ կիգան, այն ալը, ս ու ւ ւ մէ. Լ ի, խ ա փ ա խ Լ ի հրացաններ ուն առած կը սպըտի և մէկ չը խօսա։ Կասեն թէ օսմանցու կառավարութիւն արդար է և հուստար կիչէ հայուն ու քրդուն, էտ ապով է որ մէկն անգէնք է, մէկալ ոտից գլուխ սիլահէորուկ։

Ախըր անիծուկ արմատ մատնիչներ լէ առանց պատիժ չեն մնայ. չորս մատնիչ ունեն անցեալներ սպանվան էտոնց մէջն է Կրմերտու ուն Ղազար որի համար կասեն թէ ուր տղէն Ղուկաս սպանած կեղնի...

Աշան վերջ 15 Մշեցի կերինն ճանբաղ Ստանպուլ եր. թալու ուրանց աշխատանքի համար. բայց Մուշոց հինգ ժամ հեռուն, Մխաու և Կուրաղու գեղերու մէջտեղ, քուրդ ու չէրքէս ձիուոր աւաղակներ էտոնց վրէն կիգան կը թալնեն, մինչև չապիկ լէ չեն թողի և ոտներ ձեռքեր կապուկ կը թուկեն կը փախնին։ Խեղճեր ալ չեն կարնա երթալ զուրանց ճամբաղ և ճար կտրելով կը դառնան ուրանց տներ։

Ահա հըմալ մէկ կողմից աւազակներ զմզի պաշարեր են, զմեր մալ մուլք կը թալնեն. մէկալ թարաֆից լէ հուբմաթ զմզի կը տրորէ. փ ո լ ո ս ճ ի ն , ս ա լ ա ֆ ճ ի ն , մ ի Ր ի պ ա ճ ի ն ու մ ի ւ լ թ է զ ի մ ն էլ զմեր արուն քամեցին։

Խարածը (տուրք) որ առաջներ քսան զրուէ էր՝ երեք չորս տարի է որ 40 զրուէ եղաւ. զքսան զրուէ լէ չենք կանա իտայ, անօրէն հուբմաթ էս տարի վաթսուն զըրուէ կուզէ. կիալ կարնանք իտանք քանօր աշխատանք դատում չկայ։ Գինաք զխարած ումից կառնեն. նոր ծընած մանչ տղից մինչի 80 տարեկան հոգեվարք ձերից կառնեն. շտուոզի անկողին, հալաւ, լուճք ու արօր, զըմէն միրին կը ծախէ կառնէ։ Շատ տուն քսան երսուն մարդու տուրք կիտայ. շատեր քսան երսուն տարի է պանդուխտ են, բայց էմլէ էտոնց տուրք կը հաշուեն կառնեն։ Անիրաւ զարթիաներ գնուֆուս հաւաքելու մէկ նոր կերպ լէ գտան. պանդուխտ հայերու ջահիլ կնկտի կը տանեն կը բանտարկեն. երբ որ թէ պարտքը վճարող ու զէտ խեղճեր բանտից ազատող չեղնի, վա՛յ էտոնց զլխին։

Զուլմիւրու շատութենից պանդխտութիւն լէ երթալով կը շատնայ. մեր քօռ մարդիկն էլ պիլէ մինչև Չինուժա չուն գացեր է խեղճութենէն...

Է՛լ զո՞ր մէկն ասեմ. քիչ կըսեմ չափ խմանաք. սըֆտին ասեցի թէ մեր դաշտ գծոյք է դարձեր. հըմա որ երթայ բոլորովին պիտի խոպնի... Ա՛խ, աղբրտանք, ախըր մե ուկ ենք, էլ յոր՞ սապա կանենք:"

Մուշեղ.

ԹԻՒՐԻՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

Հ Ա Յ Կ Ա Ս Ն Շ Ս Ր Ժ Ո Ւ Մ Ը .

Ստորուկ ժողովուրդը կը նմանի ոչխարներու հօտի, որուն գլխուն որչափ որ զարնես նա կիջնցնէ մինչև որ ճա կատը դաշի գետնին, այն ատեն ստիպեալ գլուխը վեր կը վերցնէ կատաղած վագրի նման: Մարդկային ընդհանուր պատմութիւնը նամանաւանդ պատմական նշանաւոր անցքերը կը հատուտեն այս բանի ճշմարիտ ըլլալը:

Գժուար է ժողովրդեան մէջ մտցունել նոր գաղափար, միտք, դիւտ և ձգտում, բայց երբ նա տեսնէ բարեւոյն ու շտրին տարբերութիւնը, այլ ևս նա չսպասեր և ոչ մի ոյժ չը կրնար արգելել անոր շարժումը, մինչև որ չհասնի փափագածին:

Հայ ժողովրդի անցեալը և ոչ մի ժողովուրդ ունեցաւ, անոր ամեն մէկ քայլը արիւնով շաղկապ է, մեր հայրենեք, քի մէջ չկայ ասի մը. հոյ, որն որ արխնատ չըլլայ: Հայ ժողովրդեան դարերէ ի վեր քաջած տառապանքները անթիւ և սոսկալի են: Դատ անգամ իւր ծնած ու մեծցած տեղերը աւերակ դարձուցին, ջարդեցին, կոտորեցին ամեն բան, բայց նա աշխատելով ոտքի ելաւ և ցոյց տուեց բոլոր աշխարհի իւր գոյութիւնը: Քիւրդեր, Մանկուներ, Արաբներ և ասոնց նման գաղանարարոյ ցեղերը, նոյն խակ տաճիկ կառավարութիւնը չկրցան հասնիլ իրենց նպատակին: Ստոր հակառակ մենք կը տեսնեմք այսօր հայ ազգը նորէն իւր գոյութիւնը ունի, ինչպէս ազգութիւն, ինչպէս մի ամբողջ մարմին, ինչպէս մէկ անգամ ընդհանուր մարդկային գերդաստանի, և ինչ տեսակ գոյութիւն, գոյութիւն մը, որ կը խոստանայ մօտ ապագայի մէջ նոր կեանք, նոր արշալոյս...

Հայ ժողովուրդը շատ խարուկեալ, բայց այժմու բըռնած ընթացքը կը ցուցնէ թէ այլ ևս չպիտի խաբուի, որով հետեւ այլ ևս ոչ միջոց կայ և ոչ ալ եղանակ նորան խաբելու, նա լաւ հասկցաւ իւր կատարելիք գործը և անոր եղանակը:

Նոր արեւ ծագեց Հայաստանի մէջ. հայը բարձրացուց իւր գլուխ և գրկեց կարմիր դրօշակը, պատերազմ մղեց իւր թշնամոյն դէմ, վառա՛հ լինելով թէ քանի որ կրցաւ դիմանալ վայրենի, անողորմ ցեղերու բարբարոսութեանց ու արշաւանքներուն, մի տկար և թուլամորթ թշնամի չը պիտի կարենայ դիմադրել սուրբ պատերազմին, որ չուտով պիտի հառցնէ իւր նպատակին և պիտի իրադրծէ իւր փափագները:

Լուռ ու մունջ տենդային անհամբերութեամբ կը սլա տըրատտուի հայը կռուելու, վերջին հարուածը տալու տա

հիկ բարբարոս կառավարութեան: Անցեալ ամառուան և աշնան անցքերը մեծ տպաւորութիւն ըրին հայուն վրայ, նոր եռանդ, նոր յոյս ծնուցին նորա սրտին մէջ: Նա կը տեսնէ, կը լսէ, կ'զգայ և կը հասկնայ, թէ իւր թշնամին ինչպիսի միջոցներու շրմեղ ստիպուած է, նա կը տեսնէ թէ ինչ իրարանցում կը տիրէ իւր թշնամոյն բանակին մէջ, կը լսէ տաճիկ պաշտօնէից և զօրաց գրգռումն կառավարութեան դէմ, նա կը տեսնէ մի սոսկալի քաօս, որն որ չըջապատած է անանկացած կառավարութիւնը. նա կը տեսնէ իւր ս. գործին յանգուզն սկիզբը և կայծերը:

Յուսալից է հայ ժողովուրդը, նրա ոգևորութիւնը օր ըստ օրէ կ'աճի և կը գորանայ: Ի՛նչ ինչո՞ւ յուսահատի ու չ'ոգևորի. մի՞թէ անով որ պատրիարքը նորէն աթոռը նըստաւ, բայց նա ոչինչ կ'սպասէր անկէ. մի՞թէ Շիշմանեան ասիկապ Ղևոնդ եպիսկոպոսի այս կամ այն ըսածներէն, բայց նա եպիսկոպոսներէն ալ բան մը չէր յուսար. մի՞թէ իւր դատի ազնիւ գինւորաց ռմանց բանտարկուելէ՛ն՝ Մամբրէ մատնիչին շնորհիւ. բայց չգիտեր հայը թէ վնասակար միջոց եղած են, թէ առանց ծանրագին կորուստներու չի կրնար հասնիլ իւր սուրբ նպատակին: Մի՞թէ... մի՞թէ վերջապէս կը յուսահատի ժողովուրդը՝ տեսնելով որ իւր հակառակորդը զունդեր կը կաղմէ վայրենի ցեղերէ: Բայց չէ, վասն զի առոր մէջ աւելի պայծառ կերևի իւր թշնամոյն թուլութիւնը. ուսկէ քաջալերուիլ պէտք է: Ի՛նչ վերջապէս չէ՞ որ յիշեալ ցեղերու սուրերը երկասյրի են և պիտի գայ օր մը, որ այդ սրերը դառնան դէպի տաճիկ կառավարութիւնը և այդ օրը հետո չէ: Այս քաջ գիտէ տաճիկ կառավարութիւնը: Մի աննշան ցեղ կրնայ մի՞թէ ազատել խեղդողը, և ինչո՞ւ այս վերջինը կը դիմէ անոր օգնութեան: Յուսահատութիւնն է այդ ընողը, վասն զի տաճիկ կառավարութիւնը բոլորովին յուսահատած է. Ի՛նչ ո՞վ աւելի լաւ կը ճանչնայ այդ ցեղերը քան թիւրք կառավարութիւնը: Չէ՞ որ ատոնք էին դարերէ ի վեր իւր ապստամբ, անհնազանդ և թշնամի զաւակները և իւր տունը զլխին վրայ փրցունողները: Ի՛նչ այսօր տաճիկ կառավարութիւնը իւր երեկուայ թշնամեաց ձեռքը զէնք կուտայ՝ կեալուրները կոտորելու, այսպիսով նա չէկարող իւր նպատակին հասնիլ, այլ ընդհակառակը ատով նա երեւան հանեց իւր հիւանդոտ մարմնոյն վէրքերը և ինքը իւր հօրը կը փորէ:

Արշափ թուլութիւն թշնամոյն կողմէն և այն ալ առաջին քայլափոխին մէջ:

Երկիւղն ու սարսափը տիրած է կառավարութեան վրայ, նա առաջին ապստակէն գեւ չլմած է, ինչ պիտի լինի արդեօք, երբ ստանայ երկրորդը, երրորդը...

Միւս կողմէն աւելի և աւելի համարձակ կերպով կը բարձրացնէ իւր գլուխը շնչակեան Կոստակցութիւնը, հրախրելով իւր դրօշակին տակ ժողովրդային սուրբ դործի անձնուէր գինւորներն և ժողովրդեան մէջ ինչ մեծ տարբերութիւն կրեկուան այսօրուան հետ բաղդատելով:

Անցեալ ամառուան և աշնան դէպքերը մեծապէս նը պատեսցին սուրբ գործին. շնորհիւ անոնց ժողովրդային ոգևորութիւնը կը բարձրանայ, ամեն օր դուր կը լսէք

ամեն տեղ խորհրդածութիւններ վաղուան ընկեր գործերու մասին . չկայ ուրիշնիւթ, միշտ միեւնոյնն է, միշտ թարմ, աւելի բովանդակ, աւելի ընդարձակ հասկացողութեամբ:

Կառավարութիւնը գլուխը ծռած իր ամեն մէկ քայլը փոխելուն մէջ, կաշխատի ժողովրդեան մէջ մեծ յայտն մտցնել, մեծամեծ նախատեսք կընէ, որ ոգևորի նա: Պաշտօնեայները պաշտօններէն կիշնան իրարու ետեւէ, որը կեանքներուն հետ թոյլ վարվելուն համար և որը խիստ . ոչ կարգ կայ և ոչ օրէնք, եղածն ալ արգէն գործադրող չկայ: Նահանգներու և գաւառներու պաշտօնեայներուն մէջ կը տիրէ գաղտնի գրգռութիւն մը կառավարութեան դէմ: ամբաներով, մինչև իսկ տարիներով թողալներ չի վճարուիր: Գաւառական անտուկները պարսպ են և ժողովուրդը սոսկալի աղքատութեան մէջ ինկած է, ալ աւելի տաճիկ ժողովուրդը: Գողութիւնը, մարդասպանութիւնը սովորական գործ մը եղած է, ոչ օրէնք կայ ոչ կանոն, ամեն մարդ իր ուզածին պէս կիշնէ: Կաշառակե բութիւնը չսփռ ու սահման չունի: Երեւակայեցէք թէ որչա՛ր արդարութիւն կրնայ գտնուիլ այս տեսակ երկրի մը մէջ: Եւ պարզ ոստիկանը ձրի կը ծառայէ: Հարկաւ, հայրենեաց այդ անձնուրաց՝ ծառայողները՝ ուրիշ աղբիւրներ ունին թոշակէ աւելի շահաւոր:

Տաճկաստանի մէջ կաշառակեութեան որ ատիճան լրութեան հասնիլը կը հասկցուի հետեւեալ իրողութենէ:

Խտարէի (վարչական Ժողովոյ) անդամ ըլլալու համար, որն որ իբր թէ ժողովուրդը կընտրէ և կը հաստատէ վալին, շատերը յիսուն հարիւր օսման ոսկի կուտան վալիին, իսկ պաշտօնը ձրի է և կը տեւէ երկու տարի: Մահքէմէի (գատարան) անդամ ըլլալու համար պէտք է զոնէ երկու հարիւր լիրայ կաշառք տալ վալիին: պաշտօնը կը տեւէ երկու տարի, այդ անդամին ամսական թոշակն է երկու ոսկի և քառօրը լիրայ: Յիսուն լիրայ ստանալու համար ուրեմն կտան երկու հարիւր լիրայ . որչա՛ր հայրենասիրութիւն, կը տեսնէք: Ահասարակ Տաճկաստանի մէջ պաշտօնի անցնել և քիչ թէ շատ բարձրաստիճան պաշտօնեային կաշառք չտալը անկարելի է և միանգամայն անհասկա նալի: Եւ ինչո՞ւ չէ թէ այս նորոնտրելի անդամը ուսեալ ըլլայ կամ տգէտ, բաւական է որ տգէտի կողմէ կաշառք շատ տրուի: Մի տարուայ մէջ երեք չորս գայմագամ իրարու կը յաջորդեն, և ինչո՞ւ չը փոխուին, քանի որ վալիին ստակ պէտք է, մէկը կը վճարէ և անոր պաշտօնը ածուրդի կը դնէ, ով որ շատ ստակ տայ, նա կըլլայ գայմագամ և եթէ տեսնուի մի ազտիկ թերութիւն անոր վրայ, անմիջապէս կը վճարուի և նորէն ածուրդի կը գրուի, ահա՛ չորս — հինգ հարիւր լիրայի հասցի մ'ալ վալիին, ասկէ աւելի առատ և աւելի ապահով աղբիւր կա՞յ . այսպէս կը շարունակուի մինչև սուլթանի պալատը և նոյն իսկ սուլթանը: Նախարարութեան պաշտօն ստանալու համար կաշառք կուտան նախարարապետին (վեզիր) հիւպատոսի պաշտօն ստանալու համար կը կաշառեն նախարարը, վալիները նոյնպէս, գայմագամները, միւլթիները կաշառք կուտան վալիին: իսկ ոստիկանները (գալիթիա) գայմագամին, բօլիսին և այլն:

(Շարունակելի)

ՆՍՄՍԿ ԹԻԻՐԻՍՅ ՀԱՅՍՏԱՆԻՅ .

Քարերի 18 — 6 ապրիլ 91 .

Փետրվարին սկիզբը քաղաքիս կուսակալին կողմանէ 10 — 12 քիւրդ աղաներ կանչուեցան և իւրաքանչիւրին պատուանշան տրուելէն վերջ՝ մեծ քանակութեամբ զէնք ու փամփուշտ տրուեցան՝ որով կարող լինին իրենց զրացի հայերը նուաճել:

Քաղաքիս մէջ չորս աւաղակաց խումբ կազմեցին՝ որոց պետերն հետեւեալներն են .

Հ ա ճ ի Ն ու թ վ ռ ա յ, որուն հայրը ճ է, զ ա տ ա ի Ր է ին մէջ նախագահին օգնական է և մեծ եղբայրը կուսակալին քով մ է ք թ ու պ ճ ի .

Ք իւ շ իւ Ր է Ք է ն տ ի, Սպոր միւլթիին տղան:

Մ ա հ մ ու տ է Ք է ն տ ի, տաղաղ դատէ:

Ի ս մ ա յ ի լ պ է յ, որ Հարսիկ գիւղի բնակիչներէն է:

Առնցմէ իւրաքանչիւրը ունի 30 — 40 սրիկայ ընկերներ՝ որը կը ջանան գիշեր ցորեկ հայոց վեհաներ հասցնել, գողնալ, սպանել, անմիջ պատանխներ բռնաբարել մէկ խօսքով ինչ որ կարող են և կուզեն, անարգել կընեն: Հայերը ի զուր կը բողբեն, քանի որ զատոնք քաջալերողը նոյն ինքն կառավարութիւնն է . ինչպէս ակներև կերևի հետեւեալ դէպքերէն:

Մարտ 31 ին ցորեկը ժամը եօթ ու կէսին ատենները Ե ա դ ու պ ե ա ն Յ ա կ ո բ էֆէնտիին խանութը կը բանան և բոլոր արժէքաւոր բաները կը վերցնեն: Երբ սա կառավարութեան կը դիմէ ու կը բողբէ . կուսակալը հեզնօրէն կը պատասխանէ — Սթօթ է այդ տեսակ բաներու համար բողբելը . . . Սյսպէս կը կողպտուն: Պ օ զ ո յ ե ա ն Կ ա Ր ա պ ե տ ի և Թ ա շ ճ ե ա ն Պ ա դ տ ա ս ա Ր ի խանութները, ատնցմէ առաջինը վաճառական է, իսկ երկրորդը՝ սեղանաւոր: Սյս խեղճերը երկար տարիներ Սթերիկայ պանդխտելով կարողացած էին քիչ մը զրամագլուխ ժողովի և երկու տարի յառաջ հայրենիք վերադառնալով բացած էին իրենց խանութները: Տաճկաստանի մէջ բոլոր ինքօգնութեամբ զարգացած հայերը առհասարակ ընկճուած են ու խեղդած: Որպէս ընդհանուր, նոյնպէս և անհատական զարգացում՝ չիկայ և չի կրնար ըլլալ Տաճկաստանի մէջ: Այն ամենը որ քիչ շատ բարձր զիւրք ունեն, նորա ալ համարեալ թէ մեծաւ մասամբ թուրքին ճշգրիտ վարքն ու բարքն ընդօրինակելէն, գողութիւն, կաշառակերութիւն, չորք, քորթութիւն, անիրաւութիւն ընկնէն յառաջ եկած են:

Վերոյիշեալ սրիկաներէն մի քանին, Ք իւ շ իւ Ր ճ ե ա ն Խ ո ս Ր Ո Վ էֆէնտիի գործարանին մէջ օրուկանաւ աշխատող, Փ ի Ր ե ճ ի 18 տարեկան գեղեցկագէժ՝ Պ ե ա Ր ո ս անունով պատանւոյն պատիւը բռնարարել կուզէն . երբ իրենց շար կիւրքը գործադրել չեն յաջողիր, քաղաքապետին խորհրդով, կեղծ պարտամուրհակ մը կը պատրաստեն և կամբաստանեն. այս սխալութեամբ ոստիկանները ծեծելով, հայհոյելով բռնի բանտ կը տանին, և երբ տղան

քաղաքապետին առջև կը պոռայ թէ «ես երբեք մէկէ մը ստակ մ'առած չեմ' ե պարտք չունիմ' սուտ եմ», վա՛յ, դու թուրքը ստախոս կանուանես ըսելով, որ ան այնչափ կը ծեծեն որ չնշապառ կկոխայ, որ ասուն ոտքերէն քաշկրտելով բանտ կը տանին...

Ապրիլի 2 ին Ա մի ր զ ա յ կոչուած տեղը, որ կուսակալին ժողովատեղին է, նախանտ (պայտար) Մ ա ր . տ ի ր ո ս Շ ու չ ա ն ե ա ն ը ձի մը կը գնէ, որ ասուն ներկայ կը լինի նաև տասանորդը գանձող պաշտօնեայն (օրէնք է որ, որ և է չորքոտանի մը ծախողը տասանորդ մը կը վճարէ կառավարութեան): Շուշանեանը կը խնդրէ յիշեալ պաշտօնեայէն որ իւր պահանջը առնէ ծախողէն. իսկ թիւրք պաշտօնեայն առանց տասանորդը պահանջելու, կերթայ և երկու ժամ վերջը վերադառնալով կը հրամայէ թէ ծախողը ինձ ցոյց տուր: Շուշանեանը կը յիշեցնէ թէ ես քեզ ժամանակին ըսի որ տասանորդը առնես. ես հիմայ ո՛ւր գտնեմ: Այս պատասխանին վրայ թուրքը բարկացած, ձեռքի դաւաղանովը այնչափ կը ծեծէ հայը՝ որը ճարահատեալ ոստիկանապետին կը զիմէ գանգաւ տելու: Սա՛, դուք տպատամբներ էք ըսելով կը վռնտէ: Խեղճ հայ, երանի թէ այդ կատակերգութիւնը վերջանայր: Թիւրք պաշտօնեայն իւր ծեծելովը չի բաւականանալով. կերթայ ոստիկանապետին կըսէ թէ այս ինչ հայը կրօնքիս հայհոյեց: Այս ամբաստանութեանը վրայ, իսկոյն կը ձերբակալեն և ծեծելով բանտ կը նետեն:

Ապրիլի հինգին քաղաքիս Պ է յ . զ ա տ է կոչուած խ օ ճ ա յ ի սպասաւորը բողբոսկանաց Վօլէճի մէկ երկու աշակերտաց պատիւը վիրաւորելու կաշխատի, սակայն աշակերտաց աղաղակէն ընկերներն վրայ կը հասնին և իրողութիւնը հասկանալէ վերջ՝ թուրքը սաստիկ կը ծեծեն, մինչև որ Վօլէճի տաճկերէնի խօսան (զասատուն) կուգայ ու կը միջամտէ: Պէյլզատէն նոյն իսկ խնդիրը իմանալով որ յանցանքը իւր սպասաւորինն է, այնուամենայնիւ կատաղութեամբ կըսէ «տպատամբութիւնը մենք հայերէնն են սպասելնք, մինչդեռ այժմ բողբոսկաններն այլ (բողբոսկան ըսելով զատ ազգ մը ըսել կուգէ) դուրս եկան: Շարաթ գիշերը Պէյլզատէն 11 — 12 սրի կայներ գլուխը ժողոված Վօլէճին վրայ կը յարձակի և մեծ վնաս կը պատճառէ:

Ապրիլի հինգին Մալաթիայէն չորս ժամ հեռու Ա. ր զ ա կոչուած գ ա ս ա պ ա ի ն (աւանին) մէջ, խումբ մը քիւր. գեր բանտին վրայ յարձակելով բանտարկեալները կը փախցունեն: Մալաթիայէն կը հեռագրեն կուսակալին թէ «տեղս խառնակութեան մէջ է, չուտով եկէք»: Կուսակալը հետեւեալ առաւօտուն մեկնած պահուն, ժողովականաց առջև բարձր ձայնով կըսէ, «հայեր են որ քիւրդերը կը գրգռեն, այլ բաւական է այս կեալուրեն. բուն ըրածը, եթէ մենք զատուր չի կոտորենք, անոնք զմեզ պիտի ջարդեն»: Մինչդեռ հակառակը լինելով, մենք հաւաստի աղբիւրէ տեղեկացանք որ այս ամենը զիտմամբն իւր հրահրուոր կերպով կը կատարուին և կը վերադրուին հայոց վրայ, նոյն իսկ Բ. Ղրան հրահանգովը: Ղրեթէ ամեն շարաթ Կ. Պօլէն նոր նոր հրա-

հանգներ կտգան կուսակալին՝ ամեն միջոց ի գործ դնել հայերը փճալնելու համար: Յիմար կառավարութիւնը չի գիտեր թէ իր այս ընթացքով հայոց հետ միասին ինքն ալ պիտի փճանայ և թերևս անոնցմէ ալ յառաջ:

Վաղինակ.

Ե Ի Բ Օ Պ Ա Յ Ի Կ Ե Ա Ն Ք Ի Յ .

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՆԻՖԷՍՏԱՅԻՄԱՆ ՄԱՅԻՍԻ ՄԷԿԻՆ.

«Հնչակի» ընթերցողներին յայտնի է, որ Աշխարհահանգիսի տարին Պարիզում կայացած սօցիալիստական (ընկերավարական) միջազգային Կոնգրէսի *) որոշումով իւրաքանչիւր տարի մայիսի մէկին պէտք է կազմէ Լուրսական ու ամերիկական Բանորական Մանիֆէստացիա, յոյց: Այդ Մանիֆէստացիաի նպատակն է՝ նշանակված օրը բոլոր բանւորներին մէջ համերաշխութեան և ընդհանուր գործակցութեան սերտ կապ ստեղծել, ի նկատի ունենալով ապագայ ընդհանուր յեղափոխութիւնը, որը կոչված է անելու բանւոր, աշխատաւոր դասակարգը:

Անցեալ տարի մայիսի մէկին կայացած առաջին Մանիֆէստացիաի նկարագրութիւնը մենք արդէն արել ենք իր ժամանակին: Այս տարի էլ տեղի ունեցաւ այդ մեծ Մանիֆէստացիան, մի քանի երկրներում՝ ամսիս մէկին, իսկ մի քանիսում՝ երեքին: Յոյց անող բանւորների թիւն այս տարի թէ՛ Լուրսայում և թէ՛ Ամերիկայում տ ա ս ն մ ի լ ի օ ն ի ց աւելի էր: Չը նայած բոլոր երկրների երկչոտ, բռնաւոր, շահախնդիր կառավարութիւնների, որ թշնամի են աշխատաւոր ընդհանրութեան, ամեն գործ գրած մեծամեծ արգելքներին ու սպառնալիքներին, այդ Մանիֆէստացիան գրեթէ ամեն տեղ կայացաւ հանդիսաւոր, յանդուգն, համերաշխ ու փառաւոր կերպարանքով: Մի և նոյն օրը սարքվեցան բազմաթիւ մ ի տ ի ն գ ն ե ռ (meeting), որոնց ամեն մէկին հերթացէին վեցական, եօթնական և աւելի հազար մարդ, իսկ մի քանի տեղ՝ ութսուն, նոյն իսկ հարիւր հազար: Խօսակցան բազմաթիւ իմաստասիր ճառեր ընդդէմ ներկայ հանրակեցութեան և ի նպատակ սօցիալիստական հասարակական կազմակերպութեան. երգվեցան աղաւաղունչ երգեր, տեղի ունեցան ցոյց անողների հսկայական թափօրներ երաժշտական խմբերով և այլն, և այլն:

Մի քանի երկրներում, գլխաւորապէս Յրանսիայում և Իտալիայում, բուրժուազական կառավարութիւնները, վախից իրենց գլուխը կորցրած, այնպիսի բարբարոս կերպով իրենց զօրքերով յարձակումներ արին բանւորական անդէն ու խաղաղ բազմութիւնների վրայ, որ սարսափելի հետեւանքներ ունեցան: Այսպէս Յրանսիայի մի քանի կողմերում աշխատաւորներից շատ վիրաւորներ

*) Տես «Հնչակ» թ. 3, 1889.

եղան, իսկ Ֆուրմի քաղաքում քառասուն յիսուն հոգի վիրավորվելուց դատ, որոնցից մօտ տասներ մահացու կերպով, տասն և չորս հոգի տեղն ու անող սպան. վեց ան, դրանց զխուսուր մասը կիններ և մի քանի II—13 տարեկան երեխաներ: Այդ կոտորածը Ֆրանսիայում առաջացրեց մեծ խլրտում ու զայրոյթ և կառավարութեան դէմ միտինգներ անելով՝ բողոքներ տեղացին և այլ թշամական ցոյցեր տեղի ունեցան:

Ընդհանուր խօսքերով՝ այդպէս անցաւ այս տարի պրօլետարիատի այդ Մանիֆէստացիան: Պրօլետարիատ կոչւում է այն ահագին աշխատաւոր ընդհանրութիւնը, որ զուրկ է ամեն սեփականութիւնից և որի ապրուստի միակ ղէնքը — վարձու աշխատութիւնն է: Մեծ է պրօլետարիատի դերն ու նշանակութիւնը մարդկութեան ներքայ պատմական շրջանում: Նա կոչված է աշխարհս յեղափոխելու և հասարակական նոր, արդար ու խելացի պայմաններ սահմանելու: Ահա թէ ինչպէս ենք մենք բացատրել անցեալ տարվայ Մայիսի մէկի ցոյցի առթով իսկ՝ պրօլետարիատի շարժումների իմաստը և նրա կոչումը:—

«Կարծես այդ նշանաւոր օրը (Մայիսի մէկին) պրօլետարիատն ասում լինէր բուրժուազիային (ունեւոր, կապիտալիստ դասակարգ) . — «Տե՛ս, ահա՛ ես, իրրե հօր և հսկայական զօրագունդ, քո շքեղ պալատներից և քո զիրացած դէմքիդ ստջև կանգնած եմ՝ պատառոտած, մերկ, պարզ ու իրաւացի: Առանց իմ աշխատութեան դու չունեն հարստութիւն: Գու՛ ձեռքիս մէջն ես՝ Շտապիր, օգլովիր քո ներկայ զօրութեամբ, — քո առջև դ եմ ես անգէն, ծնծիր, հալածիր, կոտորիր կատաղութեամբ մեր կարգերը, քանի որ դեռ դու ես տիրողն աշխարհում: Խողխողիր մեզ քո մոլեգին ազա՛հ ծարաւդ յագեցնելու համար, յուսախաբւելով թէ այդպիսով դու կը փրկվես մօտ տագայում մեր ձեռքով քեզ հասանելի օրհասական մահից: Բայց իմացիր միայն, որ մեր կարգերը դու անկարող էր լինես ջնջել, որովհետեւ աշխատութիւնն, ոյժն ու իրաւունքը մենք ենք, որովհետեւ առանց մեզ ոչինչ ես դու, որովհետեւ ապագան մերն է, աշխարհը մերն է: Այսօր մենք դիմում ենք ընդհանուր գործադուլի, որ ապացոյց է քեզ մեր համերաշխութեան, սերտ կապակցութեան և ոյժի, յայտնելով քեզ լրացնել մեր նոյս կամ այն պահանջը. իսկ վա՛ղը — վաղը սօցիալական յեղափոխութիւնը կը պայթէ զլխիդ, և այն ժամանակ մնա՛ս բարեւ բուրժուազիայի թաազւորութիւն և կեցցէ՛ն որ աշխարհը աշխատաւոր մարդկութեան»:

«Բայց ի՞նչ պէտք է ներկայացնէ իրենից այդ նոր աշխարհը, որ պրօլետարիատը ձգտում է իրականացնել, պրօլետարիատը, որ զուրկ է ամեն սեփականութիւնից, որ վարձու բանող է, որ յայտնւում է տնտեսական ճորտ կապիտալիստ, ունեւոր դատակարգի՝ մինչ սրա ձեռքումն է կապիտալի, նիւթական հարստութեան հետ միասին քաղաքական ղեկը ևս: Այդ նոր աշխարհն այն է, որտեղ արդիւնադործութեան ամեն միջոցները, որսիւսիւններն ևս հողը, գործարանները, շոգե-

նաւը, երկաթուղին, ճանապարհները և այլն կը լինեն ընդհանուրի հաւաքական սեփականութիւն, հաւասարապէս կը պատկանեն ամենքին: Այդտեղ իրերի զրութեան զօրութեամբ, ամեն մարդ կը լինի աշխատաւոր: Ամենայն օր ամենքը կը բանեն ժամերի որոշ սահմանափակ թիւ և այդ աշխատութեան հիման վրայ կը ստանան այն բոլոր նիւթերն ու պէտքերը, որ հարկաւոր են իրենց ապրուստի պահանջները լրացնելու և իրենց ամեն կերպի զարգացման համար: Այդ տնտեսական հաւասարութեան շնորհով գոյութիւն չէ կարող ունենալ ո՛չ ունեւոր և ո՛չ չունեւոր. ամենքը կը լինեն հաւասարապէս բարեկեց: Ահա՛ կարճ խօսքով այն նոր, աշխատաւոր աշխարհը, այն հասարակական կազմակերպութիւնը, որի իրականացը նեւ ձգտում է այժմ պրօլետարիատը: Այդ հասարակական կազմակերպութիւնը կոչւում է սօցիալիստական, ընկերական:

«Եւրօպական ու ամերիկական պրօլետարիատն այդ հասարակական կազմակերպութիւնն իրականացնելու միակ միջոց համարում է՝ ներկայ հանրակեցութեան արմատական յեղափոխութիւն: Այդ յեղափոխութիւնն անելու համար Եւրօպայի ու Ամերիկայի բոլոր երկրների պրօլետարիները ձգտում են միանալ միմեանց հետ և կազմել մէկ ընդհանուր միջազգային աշխատաւոր - սօցիալիստ - յեղափոխական կազմակերպութիւն: Այդ կազմակերպութիւնն ընդհանուր աստատմութեան միջոցով իր ձեռքը պէտք է զգէ քաղաքական ղեկը և այդպիսով գտնաւոր իր երկրների կառավարիչը, իր նպատակի ու նախագծի համեմատ կը տնօրինէ հանրակեցութեան նոր կարգեր, կը հաստատէ այն նոր, աշխատաւոր աշխարհը, հասարակական ու տնտեսական այդ նոր կարգերը հիմնված լինելով հաւասարութեան սկզբունքների վրայ, իսպառ կը վերացնեն մարդկային բոլոր ազնւերը և մարդկութեանը տնտեսապէս դարձնելով բարեկեց, նրան ամեն միջոց կը տան կատարեալ ու լիակողմանի կերպով զարգանալ»:

Աւարտելով մեր խօսքն, այսօր սրտանց ու խնկակցութեամբ շնորհաւորում ենք Եւրօպական ու ամերիկական սօցիալիստներին, որոնց ամեն տարի մայիսի մէկին ցոյց անելու խորհրդաւոր նախաձեռնութիւնն այն միջոցներից մէկն է, որ աւելի ու աւելի փութացնում են համաշխարհային սօցիալական յեղափոխութեան օրը: Այդ մեծ օրը կը լինի յաղթութեան օր այն բոլորի, ինչ աշխարհում վսեմ է, ազնիւ է, սուրբ է, ինչ արդար, խելացի ու ճշմարիտ է, որ այժմ թաւալված են աղբի մէջ չահախնդիր կառավարութիւնների և դրանց միակ պաշտպան բուրժուազական անգործ, զեղխ ու անխաւարդ դասակարգի ջանքով: Այդ օրը վախճան կը լինի բոլոր թշուառութիւնների և կը հաստատվէ հանրամարդկային բարօրութեան ու ազատութեան թագաւորութիւնը, աշխատաւոր մարդկութեան թագաւորութիւնը:

Կեցցէ՛ համաշխարհային սօցիալական յեղափոխութիւն:

ԱԿն — Էսանց .

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԵՍՅԻՑ .

Կ . Պոլիս 25 ապրիլ 1891 .

Յակոբ Վարդ . Պատրիկեանը չաբաթ երեկոյ ուսաց հիւպատոսարան յանձնուեցաւ , որ երեքշաբթի կէսօրին զրկուեցաւ Օտեմայ . իսկ նորա ընկերները կը մնան զոհ անօթի գայլին ճիրանը : Վարդ . Պատրիկեանը փողոցի մէջ ձերբակալուած եւ շարաթի մը շափ ուս հիւպատոսարանը մնալուց յետոյ , թուրք կառավարութեան յանձնուած էր վեց ամիս պայմանաժամով եւ այժմ այդ պայմանաժամը լրացած լինելով ուս կառավարութիւնը ետ պահանջեց եւ զրկեց Ռուսաստան , ուր ի՞նչ կը լինի , առայժմ յայտնի չէ : Յայտնի է թէ Վարդ . Պատրիկեանը որպիսի համարձակութեամբ թուրք դատարանին առաջ ելայ : Ետեւ եւ պաշտպանեց Հնչակեան Կուսակցութեան պահանջները եւ սկզբունքները :

Քաղաքական յանցաւորներէն այն մասը՝ որոնք դատուելով մահուան , բերդարդելութեան եւ տաժանակիր աշխատութեան դատապարտուած էին , կը մնան կեղծ նախնի քանտին մէջ . ասոնց այցելել կը թոյլատրեն . իսկ միւս մասը , որոց հարցաքննութիւնները գաղտնի պիտի կատարուէր , կը մնան պատշաճ զաւթ եյ է ի մէջ , եւ ասոնց . հետ տեսնուել անկարելի է դարձել :

Զատկական անօթի առթիւ բանտարկեալը ներման խոստումը բնականաբար ի զերեւելու . այժմ պայրամին արձակելու տարաձայնութիւն կայ . բայց զոր յոյսերու Հարստահարիչ թուրք կառավարութիւնը լաւ գտած է խեղճ ժողովրդեան թոյլ կողմը , որ է խաբուսիկ խոստումներով օրօրել . այնպիսի խոստումներ՝ որք . հաղար անգամներ եղած եւ անգործադրելի մնացած են : Բայց զարմանալին այն է , որ ժողովրդեան մէկ մասը զեռնդունակ է խաբուելու :

Տէր Սուրբաթի դործի առթիւ տասն բանտարկեալներէ Ապուտ էֆենտիի խանին սրճագործ վանեցի Վարդանն , այն քաջատղջ երիտասարդն , բանտին մէջ թոքախտէ բռնուած է եւ սաստիկ տառապելուն բանտի հիւանդանոցը փոխադրուած է , եւ իւր ընկերները փրկիլպաշու , Յովակիմ , Մինաս եւ այլք , բանտը այցելողի մը կըսեն « Երբէք մի՛ մտածէք զմեզ , մենք աւելի գոհ կը լինէինք , եթէ աւելի մեծ գործով մը հոս եկած լինէինք . մեր ընկերաց մեզի ցոյց տրուած համակրութիւնէն մեծապէս շնորհակալ ենք : Բանտն ալ , դատարանն ալ , զնդանն ալ անօթութիւնն ալ , ամեն բան տեսանք . Ս . Գործին համար ամենքն ալ ոչինչ են . այս ալ զարոյց մ'է եղեր , շատ բան սովորեցանք . . . » Որ մը իրենց ընկերներէն մին զնգան զնեւ կուզեն « քանի որ այդ կը տանիք , զմեզ ալ տարէք , մենք չենք զատուիր » կըսեն եւ միասին զնգան կը գնան : Յտարազգի բանտարկեալը շատ համակրած են եւ թուրք պաշտօնեայք վախցած . որով հետեւ մի քանի զէպրներու առթիւ տեսածն նոցա յանդգնութիւնը Ռատիկանապետը կըզուշացնէ բանտապահներին որպէս զի ասոնց ձայնը չի հանկն :

Արաբկիրի մէջ Իւսուֆի սպանութեան կասկածով

ձերբակալած են Գրիգոր Մսրեան եւ Պողոս Պոյաճեան՝ որք հարկիւր ութսուն հեծեալազօրով խարբերդ տարուած են :

Էջմիածնէն հեռագիր ստացուեցաւ որ Մակար կաթողիկոսը ասլիքի 16 — 28ին յանկարծամահ եղած է : Մենք այսչափ կըսենք — հայ ազգին շատ սուղ նստաւ : Պերճ .

ՊԱՇՏՈՆԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ .

Շատ տեղերից դիմում են Կուսակցութեանս գործաւորներին , հարցնելով , թէ արդեօր ճիշդ է , որ իւր նոր երևան եկող « Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն » ա նուն կրող խումբը միացել է Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան հետ . քստ որով նոյն այդ պատրուակով արդէն եղեր են դրամական համագնակութիւններ եւ այդ լուրը շատեր հաւատալով , բաւական տեղեր դործերի մէջ առաջացել է զգալի խռովութիւն :

Պաշտօնապէս յայտարարում ենք , թէ Կուսակցութեանս եւ վերոյիշեալ « Դաշնակցութեան » մէջ չէ եղել եւ չը կայ ո՛չ մի միութիւն ու ո՛չ մի կապ :

Հնչակեան Յեղ . Կուսակցութեան
Կենտրոն

Կուսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետեւեալ գումարները . —

Բօլշարիաի ՎԱՌՆԱ . ք . ից՝ Կուսակցութեանս՝ իդական սեռից կազմեալ Մասնաճիւղից ու թ ս ու ն ե հինգ կտոր զանազան գեղեցիկ ձեռագործներ վիճակահանութեան համար : Նոյն քաղաքից Ա . Ս . ի ձեռքով 200 Փր . , Յ . Ս . Յ . ից 100 Փր . : Ս . քաղաքից Ա . ի ձեռքով 68 Փր . , 10 սանտիմ : Նիւ . Եօրկից . Ժ . Հ . ից 1 զօլար : Աթէնքից մեր ներկայացուցչի ձեռքով . . Յ . Փափ . ից 1 դրամի , Գ . Ս . Ե . ից 2 դր . , Մ . Սանթուրից 8 դր . , Մեծատուրից 3 դր . , Մեակերից 1 դր . , Վարդանից 10 դր . : Պողոս Հլոյց 2 դր . , Արծիւից 6 դր . , դարձեալ Գ . Ս . Ե . ից 2 դր . : Ա . Գ . Ս . ից , Գ . ձէրմ . ից , Հայկից , Ռաֆայէլից , Մու . ից — իւրաքանչիւրից հինգ ա կ ա ն դրամի : Պ . քաղ . Ա . ի սիջոյով մի խումբ զօկ օրիորդներից 100 Փրանկ . X . քաղաքից Ս . ի միջոյով սօցիալիստ . յեղափոխական ուսանողական գանձարանից 400 Փրանկ :

ԿԱՐԵԻՈՐ ՎՐԻՊԱԿ . — Սոյն համարիս ա . էջ սինակ առաջին , տող 9 ներքից . — « գորտերի կակուցը » բառերից յետոյ բաց է թողված հետեւեալ պարբերութիւնը . — « Բանտ դրա մէջ չէ . կակուցի գէմ ո՛չ կու եւ կարելի է եւ ո՛չ ծիծաղել նրա վրայ , այլ պէտք է միայն տկանը ծածկել : Բայց բանը վերոյիշած » եւ այլն . . .

Յօդուածներ , թղթակցութիւններ , տեղեկութիւններ եւ դրամ ուղարկել հետեւեալ հասցեով .

Montpellier (France) . — M. Beniard . Poste restante .

Լօնդօն . Հայկական ազատ տպարան .